ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98- և 99-րդ հոդվածներով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության եվ Ադրբեջանական Հանրապետության միջեվ սահմանազատման եվ սահմանագծման վերաբերյալ» Ազգային ժողովի հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

15.04.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության եվ Ադրբեջանական Հանրապետության միջեվ սահմանազատման եվ սահմանագծման վերաբերյալ Ազգային ժողովի հայտարարության նախագիծը՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Կից ներկայացվում են հայտարարության նախագիծը հիմնավորումներով (հիմնական զեկուցող Արթուր Խաչատրյան), ինչպես նաև «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

15.04.2024թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածները,

Կարևորելով միջազգային իրավունքի համաձայն, այդ թվում՝ ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրով և կանոնադրությամբ ստանձնած պարտավորությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման անհրաժեշտությունը.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

Արձանագրում է.

1. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատումն ու սահմանագծումը պետք է համապատասխանի միջազգային լավագույն պրակտիկային ու նորմերին և պետք է բխի ՄԱԿ-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի» (1969) «Հելսինկիի եզրափակիչ ակտի» (1975) և ԵԱՀԿ քարտուղարության «Պետական սահմանների սահմանազատում և սահմանագծում, հրատապ հարցեր և լուծման ուղիներ» (2017թ.) փաստաթղթի հայեցակարգային նորմերից, այդ թվում այն հինարար սկզբունքից, համաձայն որի առ ոչինչ է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով ձեռք բերված ցանկացած միջազգային համաձայնություն:
2. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատումն ու սահմանագծումը կարող է իրականացվել վստահության մթնոլորտի պայմաններում, որի ձևավորման նպատակով կարևորագույն նախապայմաններ են Հայաստանի Հանրապետության ինքնիշխան

տարածքից ադրբեջանական զորքերի դուրսբերումը, Ադրբեջանի ագրեսաների և ծավալապաշտական հռետորաբանության դադարեցումը, բոլոր ռազմագերիների ու պահվող անձանց վերադարձը, առկա հումանիտար բնույթի խնդիրների լուծումը և մշակութային ժառանգության պահպանումը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատումն ու սահմանագծումը որևէ կերպ չի կարող սահմանափակել Արցախի ժողովրդի Լեռնային Ղարաբաղ միջազգային երաշխիքներով հավաքական վերադարձի իրավունքը, ինչպես նաև կանխորոշել Արցախի (Լեռնային Ղարաբաղի) վերջնական կարգավիճակը:

3. Երկու երկրների միջև սահմանազատումն ու սահմանագծումը միմյանց հաջորդող գործընթացներն են: Նախ, միջազգային իրավունքի, ինչպես նաև լավագույն փորձի հաշվառմամբ երկու երկրների միջև պետք է իրականացվի սահմանի ամբողջական սահմանազատում (դելիմիտացիա), որի նկարագրությունը հաստատող փաստաթուղթը, երբ այն նախատեսում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավազորության ներքո գտնվող որևէ տարածքի փոփոխություն, ենթակա է հանրաքվեով հաստատման: Վերջինիս առկայության դեպքում իրականացվում է սահմանագծում (դեմարկացիա):

4. Երկու երկրների միջև սահմանազատման և սահմանագծման իրավաքաղաքական առաջնային հիմք համարվող ԱՊՀ անդամակցությունը հաշվի առնելով, որպես երկու երկրների սահմանազատման ելակետ պետք է դիտարկել Ադրբեջանական Հանրապետության ԱՊՀ պաշտոնական անդամակցման պահին (սեպտեմբեր 24, 1993թ.) փաստացի գործող (գոյություն ունեցող) սահմանները (հաստատված շփման գիծը): Ընդ որում, սահմանազատման աշխատանքներում պետք է օգտագործվեն ոչ միայն իրավական պատշաճ ակտերի հենքով կազմված քարտեզները (այդ թվում՝ ՌԴ գլխավոր շտաբում առկա), այլ նաև երկու խորհրդային հանրապետությունների օրինական ներկայացուցիչների (մարմինների) կողմից իրականացված սահմանազատման պայմանավորվածությունները:

5. Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման համաձայնությունը պետք է ապահովի տրանսպորտային և հաղորդակցության այլ ուղիների ամբողջական և միաժամանակյա ապաշրջափակում, առանց ինքնիշխանության որևէ սահմանափակման:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող անձինք պարտավոր են առաջնորդվել վերը նշված մոտեցումներով, զերծ մնալ բռնության սպառնալիքի ներքո որևէ տարածքային զիջումների գործելաոճից, ըստ այդմ էլ՝ քրեական հանցագործություն համարվող, առանց հանրաքվեով կայացված որոշման Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավազորության ներքո գտնվող տարածքները Ադրբեջանական Հանրապետությանը փոխանցելու կամ որևէ այլ կերպ այդ տարածքների նկատմամբ վերջինիս իրավազորությունը ճանաչելու գործողություններից:

Կոչ է ուղղում միջազգային կազմակերպություններին, ՄԱԿ-ի անդամ երկրների խորհրդարաններին պաշտպանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերը նշված դիրքորոշումը, դատապարտել Ադրբեջանի կողմից իրականացված եւ շարունակվող ագրեսիաներն ընդդեմ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի, ձեռնարկել դրանք զսպելու և Ադրբեջանին խաղաղ բանակցային գործընթաց ներառելու գործողություններ:

Կոչ է անում աշխարահասփյուռ հայությանը գործադրել ջանքեր միջազգային հանրությանը մղելու Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, հայ ժողովրդի իրավունքները վերը նշված դիրքորոշմանը համապատասխան պաշտպանելու հարցում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև սահմանազատման և սահմանագծման վերաբերյալ Ազգային ժողովի հայտարարության նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը լինելով ժողովրդի ներկայացուցչական բարձրագույն մարմինը իր հստակ դիրքորոշումը պետք է ներկայացնի երկու երկների միջև սահմանների որոշման իրավաքաղաքական հիմքերի և սկզբունքների վերաբերյալ՝ հիմնված միջազգային իրավունքի և սահմանազատման ու սահմանագծման հարցերով միջազգային լավագույն փորձի վրա: Այս մոտեցումը, որը հիմնված է ՀՀ սահմանադրության վրա ըստ էության պետք է դառնա ղեկավարող ուղեցույց Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության և Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ներկայացնող անձանց համար, որոնցից շատերը կատարում են մտահոգիչ և Հայաստանի կողմից միակողմանի զիջումների ու Հայաստանի Հանրապետության ինքնիշխան իրավազորության ներքո գտնվող տարածքների նկատմամբ իրավունքները հակառակորդին փոխանցելու մասին: